

ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 06

ք. Երևան

«17» «հունվարի» 2018թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար Վ.Ստեփանյանի (այսուհետ՝ Աշխատակազմ), որը գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. մայիսի 2-ի N 726-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության հիման վրա՝ մի կողմից, և «Սպասարկում» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ ի դեմս կազմակերպության տնօրեն Բ.Կամսարյանի (այսուհետ՝ Ստացող), որը գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. հունիսի 5-ի N 666-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածով նախատեսված բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01 բաժնի 03 խմբի 03 դասի «03. Պետական աջակցություն «Սպասարկում» ՊՈԱԿ-ին» ծրագրի իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն պայմանագրով Աշխատակազմը պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ է հատկացնում Ստացողին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի շենքերի և գույքի սպասարկումն իրականացնելու համար, իսկ Ստացողը պարտավորվում է ֆինանսական միջոցներն օգտագործել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ 2018 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը իրականացնել Աշխատակազմին ամրացված շենքերի և այլ գույքի սպասարկումը:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2. Աշխատակազմը պարտավոր է՝

2.1.1. Հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Պետական աջակցություն «Սպասարկում» ՊՈԱԿ-ին» ծրագրով նախատեսված սուբսիդիայի հաշվին:

2.1.2. Պարբերաբար վերլուծել Ստացողի կողմից կատարված ծախսերը, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման համար:

2.1.3. Պայմանագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների կատարման ընթացքում անհրաժեշտ աջակցություն և օժանդակություն ցուցաբերել Ստացողին:

### 2.2. Աշխատակազմը իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Ստացողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ անմիջականորեն չմիջամտելով վերջինի գործունեությանը:



2.2.2. Ստացողից պահանջել ներկայացնելու հաշվետվություն կամ այլ պահանջվող տեղեկատվություն:

2.2.3 Պարբերաբար վերահսկել ներկայացվող հաշվետվությունների հավաստիությունն ու ճշտությունը:

2.2.4. Վերահսկել Ստացողի հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

2.4.5. Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

### **2.3. Ստացողը պարտավոր է՝**

2.3.1. Աշխատակազմի առաջին իսկ պահանջով ներկայացնել աշխատանքների կազմակերպման և կատարման վերաբերյալ հաշվետվություն կամ այլ պահանջվող տեղեկատվություն:

2.3.2. Ստացողը աշխատանքների կատարման մասին հաշվետվությունները ներկայացնում է Աշխատակազմին յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 15-ը, տարեկան հաշվետվությունները՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 10-ը՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թ. ապրիլի 1-ի N 176-Ն, ՀՀ ֆինանսների նախարարի 2013թ. փետրվարի 4-ի N 104-Ն և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. մարտի 28-ի N 324-Ն հրամանների ձևերին համապատասխան:

2.3.3. Հաշվետու տարվա վերջին վերադարձնել գումարի չծախսված միջոցները:

### **2.4. Ստացողը իրավունք ունի՝**

2.4.1. Իր կողմից իրականացվող աշխատանքների կազմակերպման և կատարման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել Աշխատակազմին:

2.4.2 Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

## **3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ**

3.1. Սույն Պայմանագրի 1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Աշխատակազմը Ստացողին է հատկացնում տարվա կտրվածքով 258 697 300 (երկու հարյուր հիսունութ միլիոն վեց հարյուր իննսունյոթ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:

3.2. Սույն Պայմանագրի 3.1 կետում նշված գումարը Ստացողին է փոխանցվում 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն «ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» որոշմանն համաձայն՝ ամսական կտրվածքով, ոչ ուշ քան տվյալ ամսվա 10-ը, բացառությամբ հունվար ամսվա համար սահմանված գումարի, որը կփոխանցվի մինչև 2018 թվականի հունվարի 30-ը:

## **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ**

Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը:

## **5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի



ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը կնքվում է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

## 8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

### ԱՇԽԱՏԱԿԱԶՄ՝

«ՀՀ կառավարության աշխատակազմ»  
պետական կառավարչական հիմնարկ

Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության  
Հրապարակ կառավարական N 1 շենք  
Բանկ՝ ՀՀ Ֆնգործառնական վարչություն  
Հ/Հ 900011022135  
ՀՎՀՀ 02505554

Աշխատակազմի ղեկավար՝

Վ. Ստեփանյան

Կ.Տ.



### ՍՏԱՑՈՂ՝

«Սպասարկում» պետական ոչ առևտրային  
կազմակերպություն

Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության  
Հրապարակ կառավարական N 1 շենք  
Բանկ՝ Հայէկոնոմ Բանկ ՓԲԸ  
Հ/Հ 163008170181  
ՀՎՀՀ 02568463

Տնօրեն.

Բ. Կամսարյան

